

# Հուլիսի 1-ից ուժի մեջ մտած սահմանափակման վաճառման կանոնները

## Ներածություն

---

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկել կորոնավիրուսի տարածումը սահմանափակելու համար: Սահմանված կանոնները պետք է հարգել: Այդպիսով կխուսափենք հիվանդանալ կամ վարակել այլ անձանց: Ոստիկանությունը պարտավոր է վերահսկել սույն կանոնների ապահովումը:

## Հիմնարար կանոններ

---

- Ե՞թե հիվանդ եք, մնացե՛ք տանը:
- Ձեռքերը պարբերաբար լվացե՛ք օձառով և ջրով:
- Միմյանց միջև պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն:
- Թուլատրվում է շփվել մեկ շաբաթվա ընթացքում առավելագույնը 15 մարդու հետ: Ցանկալի է դրսում:
- Ե՞թե դուք գտնվում եք հասարակական վայրում (կայարան, շուկա, խանութ և այլն), որտեղ անհնար է պահպանել առնվազն 1,5 մ հեռավորություն, ապա խորհուրդ է տրվում կրել դիմակ:
- Միշտ դիմակ պահե՛ք ձեզ մոտ:

## Ճանապարհորդել երկրի ներսում կամ սահմաններից դուրս

---

- Բեկգիայում
  - Կարող եք ազատ ճանապարհորդել:
  - Ե՞թե օգտվում եք հասարակական տրանսպորտից (ավտոբուս, տրամվայ կամ գնացք) և 12 տարեկանից բարձր եք, ապա կրե՛ք միաժամանակ բերանը և քիթը ծածկող դիմակ կամ շաբլոն:
- Արձակուրդն անցկացնել սահմաններից դուրս
  - Կարող եք մեկնել միայն Եվրոմիության անդամ երկրներ, այդ թվում նաև Միացյալ Թագավորություն, ինչպես նաև Շվեյցարիա, Լիխտենշտեյն, Իսլանդիա և Նորվեգիա:
  - Արտերկրում սահմանված կանոններին կարող եք ծանոթանալ հետևյալ ինտերնետային կայքում՝ [https://diplomatie.belgium.be/nl/Diensten/Op\\_reis\\_in\\_het\\_buitenland/reisadviezen](https://diplomatie.belgium.be/nl/Diensten/Op_reis_in_het_buitenland/reisadviezen).

## Աշխատանք

---

- Աշխատե՛ք հնարավորինս տանը:

- Ե՞թե ստիպված եք գնալ ձեր աշխատանքի վայր, ապա Ձեր գործատուից պահանջվում է ապահովել առնվազն 1,5 մ սոցիալական հեռավորության կանոնները: Ե՞թե դա կիրառելի չէ, ապա դիմե՛ք ձեր գործատուին դիմակ ստանալու համար:
- Ե՞թե ունեք հարցեր, ապա, լրացուցիչ տեղեկությունների համար, կարող եք դիմել ձեր գործատուին:

## Խանութներ

---

- Բոլոր խանութները բաց են:
- Գիշերային խանութները բաց են մինչև առավոտյան 1-ը:
- Բացօթյա շուկաները գործում են:
- Կարող եք գնալ վարսավիթանոց կամ գեղեցկության սրահ:
  - Հանդիպման ժամը նշանակե՛ք նախօրոք:
  - Կրե՛ք դիմակ:

## Սրճարանային և ռեստորանային համակարգ

---

- Սրճարաններն ու ռեստորանները կգործեն են մինչև առավոտյան 1-ը:
  - Խորհուրդ է տրվում ամրագրել նախօրոք:
  - Յուրաքանչյուր խմբում թույլատրվում է առավելագույնը 15 հոգի:
  - Ձեր սեղանի շուրջ մնացե՛ք նստած:

## Սոցիալական շփում

---

- Հնարավոր է ամեն շաբաթ սերտ շփում ունենալ 15 տարբեր մարդկանց հետ:
  - Խորհուրդ է տրվում հանդիպել դրսում:
  - Ե՞թե դա հնարավոր չէ, ապա լավ օդափոխե՛ք տարածքը, պատուհանը բացե՛ք:
- Ցանկանու՞մ եք խմբակային գործունեություն ծավալել (օրինակ՝ գնալ ռեստորան կամ էքսկուրսիա, կամ ձեր տան հյուրընկալություն կազմակերպել): Այս հանդիպումները սահմանափակվում են առավելագույնը 15 անձով:

## Վարժանքներ

---

- Մարզվել թույլատրվում է առավելագույնը 50 հոգանոց խմբով: Պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն
- Մարզավել հնարավոր է ֆիթնես կենտրոնում կամ մարզական ակումբում:
- Սաունաներն ու բարեկեցության կենտրոնները գործում են հանրության համար:

## Ժամանց

---

- Հուլիսի 1-ից վերաբացվում են բոլոր ժամանցի վայրերը, ինչպիսիք են գրադարանները, զվարճանքի պուրակները, փակ խաղահրապարակները և խաղատները:
- Դուք պատրաստվում եք մասնակցել ինչ որ միջոցառմանը (օրինակ՝ գյուղի փառատոն, սպորտային մրցույթ կամ մշակութային իրադարձություն):  
Մասնակիցների քանակը խիստ սահմանափակ է:
  - Հուլիսի 1-ից՝ ներսում 200 մարդ, դրսում՝ 400 մարդ:
  - Օգոստոսի 1-ից սկսած՝ ներսում 400 մարդ, դրսում՝ 800 մարդ:
- Սահմանափակումները կարող են տարբեր լինել ըստ կազմակերպության:  
Կարող եք տեղեկանալ կազմակերպչի կայքում:
- Երեխաների համար կարող են կազմակերպվել ճամբարներ:

## Ի՞նչը դեռ հնարավոր չէ

- Դիսկոտեկները կամ գիշերային ակումբները դեռ չեն կարող վերաբացվել:
- Չեն թույլատրվում խոշոր միջոցառումները (օրինակ՝ փառատոներ ):

## Կրոն

---

- Կրոնական պաշտամունքի արարողությունները կարող են վերսկսվել:
  - Առավելագույնը 200 հոգու մասնակցությամբ:
  - Ցանկացած ֆիզիկական շփում արգելվում է:

## Մանկամտուրներ և դպրոցներ

---

- Մանկամտուրները բաց են:
- Լրացուցիչ տեղեկություններ ուսումնական հաջորդ տարվա վերաբերյալ կարող եք ստանալ դպրոցական հաստատությունից:

## Խրախուսում

---

Այս սահմանափակումները կարևոր են հանրային առողջության համար: Ակնկալվում է բոլորի ողջամտությունը: Շնորհակալություն մասնակցության համար:  
Կորոնավիրուսին կհաղթենք համատեղ պայքարով: